ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» միջոցառման «Կարողությունների զարգացում՝ ի նպաստ աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման» ծրագրի կրթական բաղադրիչի շրջանակներում Գորիսի պետական համալսարանը հայտարարում է **ԱՆՎՃԱՐ ոչ ֆորմալ դասընթացների ընդունելություն** Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Տեղ, Տաթև, Կապան համայնքների (համայնքների թիվը կարող է ընդլայնվել), այդ թվում արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների համար: Ծրագրի նպատակն է ստեղծել պայմաններ Սյունիքի մարզի երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) մասնագիտական կողմնորոշման ներուժի զարգացման, կարիերայի աջակցման համար:

Ծրագրի կրթական բաղադրիչը ներառում է հետևյալ դասընթացները՝

Կոշտ հմտություններ ապահովող ոչ ֆորմալ դասընթացներ՝ մասնագիտական աճի համար.

1. *Աշխատանքային ոլորտի անհատական իրավական ակտերի նախապատրաստումը և դրանց կիրառման առանձնահատկությունները (իրավաբանական տեխնիկա) (30 ժամ, առկա, մայիս - հունիս)*
2. *Կադրային հաշվապահություն (20 ժամ, առկա, հունիս)*
3. *IT Project Management (33 ժամ, հեռավար, հունիս – հուլիս, մասնակցության նախապայմանը՝ հարցազրույց և անգլերենի B1 մակարդակ)*
4. *Մենեջմենթ (20 ժամ, հեռավար, հունիս - հուլիս)*

5. *Գնումների գործընթացի կազմակերպում (30 ժամ, առկա, օգոստոս)*

Ճկուն հմտություններ ապահովող ոչ ֆորմալ դասընթացներ՝ անձնային աճի համար (գործատուների կողմից պահանջված ճկուն հմտություններ).

1. *Ժամանակի կառավարում և ուշադրություն մանրուքներին (5 ժամ, առկա, հունիս)*
2. *Ընդհանուր անգլերեն (60 ժամ, առկա, հունիս – հուլիս, մակարդակը՝ B1, մասնակցության նախապայմանը՝A2 արդյունք ապահովող նախաթեստ)*
3. *Մեդիագրագիտություն (15 ժամ, առկա, հունիս)*
4. *Թվային հմտություններ (30 ժամ, հեռավար, հուլիս, նախապայմանը՝ մասնակիցները ունեն ՏՀՏ անհրաժեշտ նախնական գիտելիքներ)*
5. *Ընդհանուր անգլերեն (30 ժամ, առկա, հուլիս – օգոստոս, մակարդակը՝ A2, մասնակցության նախապայմանը՝A1 արդյունք ապահովող նախաթեստ)*
6. *Թիմային աշխատանք և առաջնորդություն (10 ժամ, հեռավար, հուլիս)*
7. *Թվային հմտություններ (30 ժամ, առկա, սեպտեմբեր, նախապայմանը՝մասնակիցները ունեն ՏՀՏ անհրաժեշտ նախնական գիտելիքներ)*
8. *Հաղորդակցման հմտություններ և հոգեբանական տեխնիկաներ (5 ժամ, առկա, սեպտեմբեր)*
9. *Սթրեսի կառավարում (5 ժամ, առկա, սեպտեմբեր)*

Դիմել կարող են 16-35 տարեկան երիտասարդները, որոնք ապրում են Սյունիքի մարզում և չեն հանդիսանում նույն միջոցառման 2022 և 2023 թվականների շրջանավարտներ:
Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել հետևյալ հղումով՝ https://forms.gle/5kuW8FZr9YXEmi357:
Դիմումներն ընդունվում են մինչև 2024 թվականի մայիսի 19-ը (լրացուցիչ ընդունելության հնարավորությամբ):

Ծրագրի մանրամասներին ծանոթանալու համար կարող եք դիմել Գորիսի պետական համալսարան (3-րդ մասնաշենք, 3-րդ հարկ, Շարունակական կրթության և կարիերայի զարգացման բաժին, հեռ.՝ 077-33-76-90 (Ա. Դինունց), 098-19-67-14 (Ա. Գալստյան), էլփոստ՝ gorsu.sharunakakankrtutyun@gmail.com, fb՝ https://www.facebook.com/ExtensionCareerGSU):

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ